ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԴՐՎԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/32-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 116-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (06.08.2020-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2020.07.27-2020.08.09 Պաշտոնական հրապարակման օրը 27.07.2020
Ընդունող մարմին	Կենտրոնական բանկի խորհուրդ
Ընդունման ամսաթիվ	17.07.2020
Ստորագրող մարմին	Կենտրոնական բանկի նախագահ
Ստորագրման ամսաթիվ	22.07.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	06.08.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

17 հուլիսի 2020 թվականի թիվ 116-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԴՐՎԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/32-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով հստակեցնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները և ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերի նկատմամբ պահանջները, **հիմք ընդունելով** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***որոշում է.***

1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները» կանոնակարգ 10/32-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի
նախագահ՝ **Մ. Գալստյան**

2020 թ. հուլիսի 22
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հուլիսի 17-ի
թիվ 116-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/32

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԴՐՎԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները:

2. Սույն կանոնակարգի իմաստով միջազգային ֆինանսական կազմակերպություններ են համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանված միջազգային ֆինանսական կազմակերպությունները:

3. Սույն կանոնակարգով սահմանված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԴՐՎԵԼ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

4. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները հեջավորման նպատակով կարող են

ներդրվել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ածանցյալ ֆինանսական գործիքներում: Ընդ որում՝ ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումը համարվում է հեջավորման նպատակով իրականացված, եթե

1) ուղղված է ֆոնդի ներդրումների կառավարման հետ կապված ռիսկերի ամբողջությամբ կամ մասնակի նվազեցմանը,

2) առկա է անմիջական կապ հեջավորվող օբյեկտի (ռիսկի) և ածանցյալ ֆինանսական գործիքի միջև, և

3) բխում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ներդրումային քաղաքականությունից, այդ թվում՝ կապված է ֆոնդում ներառված ակտիվների հետ կամ այն ակտիվների հետ, որոնցում ֆոնդը նախատեսում է ներդրումներ իրականացնել:

5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից ածանցյալ ֆինանսական գործիքների կնքումը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնք ենթակա չեն լիցենզավորման և/կամ վերահսկողության որևէ պետությունում և հանդիսանում են միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն, չի հանդիսանում արտասահմանյան պետությունում կատարված ներդրում:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

6. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքի կողմ կարող են լինել՝

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունները,

2) Միջազգային ֆինանսական կազմակերպությունները: Ընդ որում՝ այս կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ Օրենքի 39-րդ հոդվածի 15-րդ մասով բանկերի համար սահմանված գործարքի չափերը,

3) Օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունները, որոնք առնվազն ունեն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 հուլիսի 2020 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան